ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Պ-244-27.04.2022-ԱՍ-011/0)* ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Հեղինակ		Նախագիծը լրամշակվել է: Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է՝ լրացվող հոդվածներին համապատասխան:		Ընդունվել է:
2.	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ **Հոդված 1.** «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝. «Ներհամայնքային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող բոլոր ավտոբուսները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, իսկ միջմարզային և ներմարզային կանոնավոր երթուղիների մրցույթին ներկայացվող հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի տրանսպորտային միջոցների նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		Ընդունվել է:

3.	Հեղինակ	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները հանվել են, իսկ 4-րդ հոդվածը լրամշակվել և համարակալվել է որպես 2-րդ հոդված: 2-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ **Հոդված 2.** Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «նրանց իջեցումը:» բառերից հետո լրացնել նոր նախադասություն հետևյալ շարադասությամբ.՝ «Կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտովարորդներն անհրաժեշտության դեպքում պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց (ներառյալ նստեցնել, իջեցնել, տեղեկատվություն տրամադրել) օգտվելու տրանսպորտային սպասարկման իրենց իրավունքից:»:		Ընդունվել է:
	Հեղինակ	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածը համարակալվել է որպես 3-րդ հոդված և շարադրվել հետևյալ բովանդակությամբ՝ **Հոդված 3.** Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ հետևյալ նախադասությամբ. «4. Ավտոկայարանային գործունեության կազմակերպումը պետք է համապատասխանի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջներին, որոնք սահմանվում են Ավտոկայարանային գործունեության կազմակերպման կարգով:»:		Ընդունվել է:
4.	Հեղինակ	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածը համարակալվել է որպես 4-րդ հոդված և շարադրվել հետևյալ		Ընդունվել է:

			բովանդակությամբ՝ **Հոդված 4.** Օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի «զամբյուղներով:» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ շարադասությամբ՝ «Մերձքաղաքային, միջքաղաքային, ներմարզային, միջմարզային և միջպետական փոխադրումներից օգտվելիս հաշմանդամություն ունեցող անձն իրավունք ունի ծանրոցից և ուղեբեռից բացի իր հետ անվճար փոխադրելու նաև աջակցող միջոցներ:»:		
5.	Հեղինակ	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի համարակալումը փոխվել է, նոր նախագծով 5-րդ հոդված,որը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ ***ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*** **Հոդված 5.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: 3. Սույն օրենքի 5-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում օրենքի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարի հետո: 4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը մրցութային եղանակով արդեն ընտրված և		Ընդունվել է:

			կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև օպերատորների կողմից սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին շահագործվող ներհամայնքային կանոնավոր երթուղիները 2023 թվականի հունվարի 1-ից հետո ավտոտրանսպորտային միջոցներով համալրելու կամ փոխարինելու դեպքում դրանք պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:		